


Նախագահ Թոմաս Ա. Մոնսոն



Մեզ առաջնորդող մարգարեներ

Մի քանի տարի առաջ ես նստել էի Սուլթ Լեյք Տաճարի այն սենյակում, որտեղ շաբաթը մի անգամ հանդիպում են Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը: Իմ հայացքն ուղղված էր Առաջին Նախագահության դիմացի պատին, որտեղ ես տեսնում էի Եկեղեցու Նախագահներից յուրաքանչյուրի դիմանկարը:

Մինչ ես նայում էի նրանց՝ իմ նախորդներին, սկսած Մարգարե Ջոզեֆ Սմիթից (1805–44) մինչև Մարգարե Գորդոն Բ. Հինքլին (1910–2008), ես մտածեցի. «Որքա՞ն երախտապարտ եմ ես նրանցից յուրաքանչյուրի առաջնորդության համար»:

Նրանք հրաշալի մարդիկ են, ովքեր երբեք չեն տատանվել, երբեք չեն վարանել և երբեք չեն ձախողվել: Նրանք Աստծո մարդիկ են: Երբ ես մտածում եմ մեր ժամանակների մարգարեների մասին, ում ես ճանաչել և սիրել եմ, վերհիշում եմ նրանց կյանքը, նրանց հատկանիշները և նրանց ոգեշնչված ուսմունքները:

Երբ ես ծնվեցի, Եկեղեցու Նախագահը Նախագահ Հեբեր Ջ. Գրանտն էր (1856–1945): Երբ ես խորհում եմ նրա կյանքի և ուսմունքների մասին, մտածում եմ, որ Նախագահ Գրանտը հաստատակամության մարմնավորում էր, ինչն էլ դրսևորվում էր բարի և ազնիվ գործերում:

Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը (1870–1951) Եկեղեցու Նախագահ էր այն ժամանակ, երբ ես ծառայում էի որպես եպիսկոպոս իմ ծխում՝ Սուլթ Լեյք Սիթիում: Նա նշել է, որ մեծ պայքար է գնում Տիրոջ և հակառակորդի միջև: «Եթե դուք մնաք սահմանազօծի Տիրոջ կողմում,

դուք կլինեք Նրա ազդեցության տակ և սխալ գործելու ցանկություն չեք ունենա»:¹

1963թ.-ին Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը (1873–1970) ինձ ծառայության կանչեց՝ որպես Տասներկուսի Քվորումի անդամ: Նա ուսուցանում էր հոգատարություն ուրիշների հանդեպ՝ իր ապրած կյանքի օրինակով: «Ճշմարիտ քրիստոնեությունը,- ասել է նա,- սերն է գործողության մեջ»:²

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը (1876–1972)՝ Եկեղեցու ամենաբեղմնավոր գրողներից մեկը, իր կյանքում որպես առաջնորդող սկզբունք է ընդունել ավետարանի ուսումնասիրությունը: Նա անդադար կարդում էր սուրբ գրությունները և երբևէ իմ ճանաչած մարդկանցից լավ գիտեր դրանց էջերում գտնվող ուսմունքներն ու վարդապետությունները:

Նախագահ Հարոլդ Բ. Լին (1899–1973) ծառայում էր որպես իմ ցցի նախագահ, երբ ես պատանի էի: Նրա սիրած մեջբերումն էր՝ «Կանգնեք սուրբ տեղերում և մի շարժվեք» արտահայտությունը:³ Նա խրախուսում էր Սրբերին հաղորդակից լինել և արձագանքել Սուրբ Հոգու հուշումներին:

Իմ կարծիքով, Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի (1895–1985) կյանքի առաջնորդող սկզբունքը նվիրումն էր: Նա ամբողջությամբ, աներկբայորեն նվիրված էր Տիրոջը: Նա լիովին ապրում էր ավետարանով :

Երբ Նախագահ Էզրա Թավո Բենսոնը (1899–1994) դարձավ Եկեղեցու Նախագահ, նա կանչեց ինձ ծառայելու որպես իր Երկրորդ Խորհրդական Առաջին

Նախագահությունում: Մերը նրա առաջնորդող սկզբունքն էր, որն արտահայտված է նրա կողմից սիրված Փրկիչի հետևյալ խոսքերում. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ»:⁴

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը (1907–95) միշտ լավն էր տեսնում ուրիշների մեջ: Նա միշտ քաղաքավարի էր և խոնարհ: Ինձ համար պատիվ էր ծառայել որպես նրա Երկրորդ Խորհրդակցան:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է մեզ՝ անել հնարավորինս լավագույնը: Նա գորեղ վկայություն էր բերում Փրկիչի և Նրա առաքելության վերաբերյալ: Նա մեզ ուսուցանում էր սիրով: Ինձ համար պատիվ ու օրհնություն էր որպես նրա Առաջին Խորհրդակցան ծառայելը :

Փրկիչն ուղարկում է մարգարեներ, որովհետև Նա սիրում է մեզ: Հոկտեմբերի գերագույն համաժողովին Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները կրկին հնարավորություն կունենան կիսվելու Նրա խոսքով: Մենք մոտենում ենք այս պատասխանատվությանը մեծ լրջությամբ ու խոնարհությամբ:

Ինչքան օրհնված ենք մենք, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին գոյություն ունի երկրի վրա և, Եկեղեցին հիմնված է հայտնության վեմի վրա: Շարունակվող հայտնությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի կենսարար արյունն է:

Եկեք պատրաստվենք անձնական հայտնություն ստանալուն, ինչն առատորեն տրվում է գերագույն համաժողովի ընթացքում: Թող մեր սրտերը լցվեն խորը վճռականությամբ, մինչ մենք կբարձրացնենք մեր ձեռքերը՝ հաստատելու կենդանի մարգարեներին և առաքյալներին: Թող մենք լուսավորվենք, վեհանանք, մխիթարվենք և ամրապնդվենք, մինչ կյսենք նրանց ուղերձները: Եվ թող մենք պատրաստ լինենք կրկին նվիրելու մեր անձերը Տեր Հիսուս Քրիստոսին, Նրա ավետարանին ու Նրա գործին և ապրենք, մեկ անգամ ևս վճիռ կայացնելով՝ պահել Նրա պատվիրանները և կատարել Նրա կամքը:

ՀՂՈՒՆԵՐ

1. *Եկեղեցու Նախագահների Ոստնվանքը. Չորջ Ալբերտ Սմիթ* (2011), 217:
2. *Teachings of Presidents of the Church: David O. McKay* (2003), 181.
3. Վարդապետություն և Ովստեր 87.8
4. 3 Նեփի 27.27

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐԶԻՑ

Նախագահ Մոնսոնը ուսուցանում է մի հզոր դաս, որը սովորել է իրենից առաջ եղած մարգարեներից:

Նա նաև հիշեցնում է մեզ, որ «Փրկիչն ուղարկում է մարգարեներ, որովհետև Նա սիրում է մեզ»: Նրանց հետ, ում ծառայում և ուսուցանում եք, կարող եք քննարկել, թե մարգարեներն ու առաքյալները ինչպես են մեր հանդեպ Աստծո սիրո նշանը հանդիսանում: Կիսվեք անցյալ գերագույն համաժողովում Նախագահ Մոնսոնի ելույթներից որևէ խորհրդով: Հրավիրեք նրանց, ում ուսուցանում եք, պատրաստվել գերագույն համաժողովին, վերանայելով ելույթները, որոնք հատկապես ոգեշնչել են նրանց և օգնել զգալու Փրկիչի սերը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Փառք Քեզ, Տեր, Մարգարեի համար

Ինչպիսի՞ ազդեցություն է թողել ձեզ վրա մեր մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: Ի՞նչ կհիշեք նրա մասին: Ձեր օրագրում գրառումներ կատարեք Նախագահ Մոնսոնի և նրա կյանքի մասին, ինչպես *ևս* է այս ուղերձում հիշատակում յուրաքանչյուր մարգարեի ազդեցությունը:

Դուք կարող եք նաև ընտրել նրա մեջբերումներից մեկը, որը ձեզ դուր է եկել և գրել այն մի տեղ, որը հաճախ կլիսի ձեր աչքի առաջ, օրինակ դպրոցական թղթապանակի վրա կամ փակցրեք այն ձեր սենյակում: Դուք կարող եք նաև նկարել այդ մեջբերումը ձեր հեռախոսով և տեղադրել այն հեռախոսի ֆոնի վրա: Ամեն անգամ մեջբերումը տեսնելիս դուք կարող եք խորհել կենդանի մարգարեի կարևորության մասին և հիշել, որ նա այսօր այստեղ է մեզ սիրելու և առաջնորդելու համար:

Դուք կարող եք ներբեռնել «Փառք Քեզ, Տեր, Մարգարեի համար» երգը lds.org/go/9176 կայքից:

ԵՐԵԽԱՆԵՐ

Մարգարեներն առաջնորդում են մեզ դեպի Քրիստոսը

Փրկիչն ուղարկում է մարգարեներ, որովհետև Նա սիրում է մեզ: Մարգարեներին հետևելն օգնում է մեզ ընտրել ճիշտը: Դուք ի՞նչ երկու քայլ կարող եք անել կատարել մարգարեին հետևելու համար:



Հավատք, Ընտանիք,
Սփոփանք

Մեկ սրտի

Աղոթքով ուսումնասիրեք այս կտորը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: Հասկանալով Սփոփող Միության նպատակը, Աստծո ղուստորներն ինչպե՞ս են պատրաստուիում հավերժական կյանքի օրհնություններին:

«Տերն իր ժողովրդին կոչեց Սիոն, որովհետև նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին, և բնակվում էին արդարության մեջ. և ոչ մի աղքատ չկար նրանց մեջ» (Մովսես 7.18): Մենք ինչպե՞ս կարող ենք մեկ դառնալ:

Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է. «Անզլերեն *քախություն* բառի հիմքում ընկած է *մեկ* բառը: Եթե ողջ մարդկությունը հասկանար սա, երբեք չէր լինի որևէ մեկը, ում հանդեպ մենք անտարբեր կլինեինք՝ անկախ տարիքից, ազգությունից, սեռից, կրոնից, հասարակական կամ տնտեսական վիճակից: Մենք կձգտեինք ընդօրինակել Փրկիչին և երբեք չէինք լինի անբարյացակամ, անտարբեր, անհարգալից կամ անտարբեր ուրիշների հանդեպ»:¹

Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդակցանը, ուսուցանել է. «Երբ մարդիկ ունեն Հոգին իրենց հետ, [նրանք] կարող են ներդաշնակություն ակնկալել: . . . Աստծո Հոգին երբեք չի ծնում

հակառակություն (տես 3 Նեփի 11.29): . . . Այն տանում է դեպի անձնական խաղաղություն և ուրիշների հետ միասնականության զգացում»:²

Խոսելով ընտանեկան դժվարությունների մասին, Քերոլ Մ. Ստեֆենսը, ով ծառայել է որպես Սփոփող Միության Առաջին Խորհրդակցան, ասել է. «Ես երբեք չեմ ամուսնալուծվել, ապրել ցավ ու անապահովություն, որ գալիս է լքված լինելու արդյունքում, և կրել միայնակ մոր պատասխանատվությունը: Ես չեմ իմացել՝ ինչ է զավակի մահը, անպտղությունը կամ համասեռամոլությունը: Ես չեմ ենթարկվել բռնության, չեմ ունեցել խրոնիկ հիվանդություն կամ կախվածություն: Դրանք իմ աճի համար առիթ չեն հանդիսացել:

. . . Բայց շնորհիվ *իմ* անձնական փորձառությունների ու փորձությունների . . . Ես քաջածանոթ եմ Նրան, ով հասկանում է: . . . Բացի այդ, ես անցել եմ իմ հիշատակած բոլոր մահկանացու փորձությունների միջով՝ լինելով

ղուստր, մայր, տատիկ, քույր, մորաքույր, հորաքույր և ընկեր:

Որպես Աստծո ուխտ պահող ղուստրեր, մենք հնարավորություն ունենք սովորել ոչ միայն մեր խնդիրներից, այլև կարեկցանքով և գթասրտությամբ միավորվել, երբ աջակցում և նեցուկ ենք կանգնում Աստծո ընտանիքի մյուս անդամներին իրենց մաքառումների մեջ»:³

Լրացուցիչ սուրբ գրություններ և տեղեկություններ

Հովհաննես 17.20–23, Եփեսացիս 4.15, Մոսիա 18.21–22, 4 Նեփի 1.15; reliefsociety.lds.org

ՀՂՈՒՄՆԵՐ

1. M. Russell Ballard, “The Atonement and the Value of One Soul,” *Liahona*, May 2004, 86.
2. Henry B. Eyring, “That We May Be One,” *Ensign*, May 1998, 67.
3. Քերոլ Մ. Սթեֆենս, «Ընտանիքն Աստծուց է», *Լիստնես*, մայիս 2015, 11-12:

Խորհեք այս մասին
Ինչպե՞ս է միմյանց հետ մեկ լինելն օգնում մեզ դառնալ մեկ Աստծո հետ: